ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/1.1-24

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2024թ. հունվարի 16-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելված N2-ի 1.1 կետով նախատեսված **«Զբոսաշրջության ոլորտի վիճակագրական, տեղեկատվական համակարգի բարելավում և սպասարկում»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ս.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝ Հանձնաժողովի նախագահ
Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ
Ս.Ասլիզադյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Լ.Աշոտյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի օգնական
Մ.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի օգնական
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի օրակարգը.

- մրցույթի արդյունքների ամփոփում:

Լսեցին

Հանձնաժողովի քարտուղարը տեղեկացրեց, որ «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» 2024 թվականի ծրագրի շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

Նշվեց, որ

1. armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի 1.1 կետով նախատեսված **«Զբոսաշրջության ոլորտի վիճակագրական, տեղեկատվական համակարգի բարելավում և սպասարկում»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացվել է 1 (մեկ) հայտ՝ «Զենտա» ՍՊԸ-ի կողմից:

2. armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում Ծրագրի հավելված 2-ի 1.1 կետով նախատեսված **«Զբոսաշրջության ոլորտի վիճակագրական, տեղեկատվական համակարգի բարելավում և սպասարկում»** միջոցառման իրականացման նպատակով հաղթող է ճանաչվել «Զենտա» ՍՊԸ-ն:

Որոշեցին՝

Հանձնաժողովը միաձայն որոշեց.

1. Հաղթող ճանաչել Ծրագրի հավելված 2-ի 1.1 կետով նախատեսված **«Զբոսաշրջության ոլորտի վիճակագրական, տեղեկատվական համակարգի բարելավում և սպասարկում»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող 1 (մեկ) կազմակերպություն՝ «Զենտա» ՍՊԸ-ն:

2. Կնքել համապատասխան դրամաշնորհի պայմանագիր Ծրագրի հավելված 2-ի 1.1 կետով նախատեսված **«Զբոսաշրջության ոլորտի վիճակագրական, տեղեկատվական համակարգի բարելավում և սպասարկում»** միջոցառման իրականացման համար՝

«Զենտա» ՍՊԸ-ի հետ՝ 3 300 000 (երեք միլիոն երեք հարյուր հազար) (առանց ԱԱՀ) ՀՀ դրամի չափով:

3. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ս.Հակոբյան
(հանձնաժողովի նախագահ) - _____

Ա.Մկրտչյան - _____

Ս.Ասլիզադյան - _____

Ս.Հովհաննիսյան - _____

Հ.Սահակյան - _____

Լ.Աշոտյան - _____

Մ.Հակոբյան - _____

Շ.Հովսեփյան - _____